Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered charity No. 1173403

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILLINGUAL

1: Today's Scripture Reading, 14th June 2026 Bulletin 28/2026

Third Sunday after Pentecost
(Eve of the Fast of our Holy Father St. Gregory the Illuminator)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 6:12-23

Ուրեմն ա՛լ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմինին վրայ, որ հնազանդիք անոր ցանկութիւններուն. ու ձեր մարմինին անդամները մի՛ յանձնէք մեղքին՝ անիրաւութեան գործիք ըլլալու: Հապա դուք ձեզ ընծայեցէ՛ք Աստուծոյ՝ որպէս մեռելներէն վերապրողներ, եւ ձեր անդամները ընծայեցէ՛ք Աստուծոյ՝ իբր արդարութեան գործիքներ: Արդարեւ մեղքը պիտի չիշխէ ձեր վրայ. որովհետեւ ո՛չ թէ Օրէնքի տակ էք, հապա՝ շնորհքի տակ:

Ուրեմն ի՞նչ. մեղանչե՞նք, քանի որ Օրէնքի տակ չենք, հապա՝ շնորհքի տակ: Ամե՛նեւին: Չէ՞ք գիտեր թէ որո՛ւն որ դուք ձեզ իբր ստրուկ յանձնէք՝ հնազանդելու համար, ստրուկ կը՝ըլլաք անոր՝ որուն կը հնազանդիք, թէ՛ մեղքին՝ որ կը՝առաջնորդէ մահուան, եւ թէ հնազանդութեան՝ որ կը՝առաջնորդէ արդարութեան: Բայց շնորհակալութի՛ւն Աստուծոյ, որ մեղքին ստրուկ ըլլալէ ետք՝ սրտանց հնազանդեցաք այն ուսուցումի տիպարին՝ որ աւանդուեցաւ ձեզի: Ուստի դուք՝ ազատած ըլլալով մեղքէն՝ ստրուկ եղաք արդարութեա՛ն.(մարդկային կերպով կը խօսիմ՝ ձեր մարմինին տկարութեան պատճառով.) քանի որ ինչպէս յանձնեցիք ձեր անդամները անօրէնութեան՝ ստրուկ ըլլալու անմաքրութեան եւ անօրէնութեան, այնպէս ալ հիմա ընծայեցէ՛ք ձեր անդամները սրբութեան՝ ստրուկ ըլլալու արդարութեան:

Որովհետեւ երբ դուք ստրուկ էիք մեղքին՝ ազատ էիք արդարութենէն: Ուրեմն այն ատեն ի՞նչ պտուղ ունէիք այն բաներէն՝ որոնց համար հիմա կը՝ամչնաք. որովհետեւ անոնց վախճանը մահ է: Իսկ հիմա, մեղքէն ազատած եւ Աստուծոյ ստրուկ եղած ըլլալով, ձեր պտուղը ունիք՝ սրբութեամբ, ու վախճանը՝ յաւիտենական կեանքը: Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, բայց Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք է, Յիսուս Քրիստոսի՝ մեր Տէրոջ միջոցով:

The Epistle of St Paul to the Romans 6:12-23;

Therefore do not let sin reign in your mortal body so that you obey its evil desires. Do not offer any part of yourself to sin as an instrument of wickedness, but rather offer yourselves to God as those who have been brought from death to life; and offer every part of yourself to him as an instrument of righteousness. For sin shall no longer be your master, because you are not under the law, but under grace.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Slaves to Righteousness

What then? Shall we sin because we are not under the law but under grace? By no means! Don't you know that when you offer yourselves to someone as obedient slaves, you are slaves of the one you obey—whether you are slaves to sin, which leads to death, or to obedience, which leads to righteousness? But thanks be to God that, though you used to be slaves to sin, you have come to obey from your heart the pattern of teaching that has now claimed your allegiance. You have been set free from sin and have become slaves to righteousness.

I am using an example from everyday life because of your human limitations. Just as you used to offer yourselves as slaves to impurity and to ever-increasing wickedness, so now offer yourselves as slaves to righteousness leading to holiness. When you were slaves to sin, you were free from the control of righteousness. What benefit did you reap at that time from the things you are now ashamed of? Those things result in death! But now that you have been set free from sin and have become slaves of God, the benefit you reap leads to holiness, and the result is eternal life. For the wages of sin is death, but the gift of God is eternal life in [b] Christ Jesus our Lord.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12:1-8

Jesus with disciples

Այդ ատեն Յիսուս՝ Շաբաթ օր մը՝ գնաց արտերու մէջէն. իր աշակերտները՝ անօթենալով՝ սկսան ցորենի հասկեր փրցնել եւ ուտել: Երբ Փարիսեցիները տեսան՝ ըսին անոր. «Ահա՛ քու աշակերտներդ կը գործեն, մինչդեռ արտօնուած չէ գործել Շաբաթ օրը»: Ան ալ ըսաւ անոնց. «Չէ՞ք կարդացեր Դաւիթի ըրածը, երբ ինք եւ իրեն հետ եղողները անօթեցան. մտաւ Աստուծոյ տունը, ու կերաւ առաջադրութեան հացերը, որ ո՛չ իրեն արտօնուած էր ուտել, ո՛չ ալ իրեն հետ եղողներուն, բայց միայն քահանաներուն: Կամ թէ Օրէնքին մէջ չէ՞ք կարդացեր թէ քահանաները կը սրբապղծեն Շաբաթը տաճարին մէջ՝ Շաբաթ օրերը, եւ անպարտ են: Բայց կը յայտարարեմ ձեզի թէ այստեղ տաճարէ՛ն աւելի մեծ մէկը կայ: Եթէ գիտնայիք թէ ի՛նչ ըսել է. "Կարեկցութի՛ւն կ՚ուզեմ, ու ո՛չ թէ զոհ", այն ատեն չէիք դատապարտեր անպարտները. որովհետեւ մարդու Որդին տէրն է Շաբաթին»:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 12:1-8

At that time Jesus went through the grainfields on the Sabbath. His disciples were hungry and began to pick some heads of grain and eat them. When the Pharisees saw this, they said to him, "Look! Your disciples are doing what is unlawful on the Sabbath."

He answered, "Haven't you read what David did when he and his companions were hungry? He entered the house of God, and he and his companions ate the consecrated bread—which was not lawful for them to do, but only for the priests. Or haven't you read in the Law

Dear Parishioners and Armenian Community Members:
The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

that the priests on Sabbath duty in the temple desecrate the Sabbath and yet are innocent? I tell you that something greater than the temple is here. If you had known what these words mean, 'I desire mercy, not sacrifice,' [a] you would not have condemned the innocent. For the Son of Man is Lord of the Sabbath."

Ս. Ներսես Մեծ Հայրապետի և Խադ եպիսկոպոսի հիշատակության օր

Հայ բազմաշնորհ կաթողիկոսներից է Ս. Ներսես Հայրապետը (353-373թթ.), որին իրավամբ տրվել է Մեծ անունը: Ըստ պատմական աղբյուրների՝ նա Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմից է, Հուսիկ Հայրապետի թոռը: Փառեն կաթողիկոսի մահվանից հետո հայոց Արշակ թագավորի սենեկապան Ներսեսը, դեռևս աշխարհական, նկատվում է կաթողիկոսական գահի ամենաարժանի թեկնածու և արքայի պարտադրմամբ ձեռնադրվում է կաթողիկոս: Հետագայում հայրապետական աթոռի գահակալը դառնում է Հայ Առաքելական Եկեղեցու առաջին մեծ բարեփոխիչը և իր ժողովրդի մեծանուն բարերարը: Նրա նախաձեռնությամբ գումարված Աշտիշատի ազգային-եկեղեցական ժողովում (354թ.) առաջին անգամ ընդունվում են որոշումներ, որոնք կանոնակարգում են հոգևոր-եկեղեցական կյանքը, սահմանում ընտանիքի բարոյական սկզբունքները: Ներսես Մեծ Հայրապետի նախաձեռնությամբ հիմնվում են վանքեր ու դպրոցներ, բոլոր անտունների ու աղքատների համար կառուցվում ապաստաններ ու հիվանդանոցներ: Հայրապետն իր ժողովրդի կողքին է եղել միշտ և ամենուր: Ջիրավի ճակատամարտի հաղթանակը ձեռք է բերվել նաև Ս. Ներսես Հայրապետի շնորհիվ, ով ողջ ճակատամարտի ընթացքում մոտակա լեռան վրա բազկատարած աղոթել է հայոց բանակի հաղթության համար: Ազգաշեն ու եկեղեցաշեն այս գործունեության համար էլ Ս. Ներսես Հայրապետին կոչել են նաև «Լուսավորիչ սրտից»: Հայրապետի բոլոր այս ձեռնարկներին աջակից ու գործակից է եղել Խադ եպիսկոպոսը, որին պատմիչ Փավստոս Բյուզանդը կոչել է նաև Ներսես Հայրապետի աթոռակից: Հայ Առաքելական եկեղեցին սրբերի շարքը դասելով իր երկու նվիրյալ զավակներին՝ նրանց հիշատակը միասնաբար տոնում է Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին հաջորդող շաբաթ օրը:

Commemoration of St. Nersess the Great and St. Bishop Khad

St. Nersess the Great, Catholicos of All Armenians (353-373) is one of the most prominent Armenian Pontiffs. According to historical sources he is from the family and lineage of St. Gregory the Illuminator, and grandson of the Armenian Patriarch Houssik.

Following the death of Catholicos Paren I (of Ashtishat), Nersess is a chamberlain (chief attendant or steward) for the Armenian King Arshak. Although a layman at the time, he is found to be the most deserving candidiate for the throne of the Catholicos, and under the compulsion of the King is ordained as a priest, and consecrated as Catholicos. The Armenian Pontiff becomes the first great reformer of the Church and a renowned benefactor of his nation. Upon Nersess' initiative, a National Ecclesiastical Council is convened in Ashtishat in 354. Upon his initiative, decisions

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

are made which are intended to regulate and bring order to the spiritual-ecclesiastical life, based upon the defined moral principles of the family. Nersess the Great establishes numerous monasteries and schools. He builds hospices, residences and hospitals for the ill, homeless and the poor. The Catholicos was always with his flock. The Armenian people won the battle of Dzirav due to St. Nersess' unceasing prayers for victory on a nearby mountaintop, as the war was being waged on the field below.

For his devout activity Nersess the Great is also called the "Illuminator of Hearts".

Bishop Khad was a supporter of Nersess the Great, and was instrumental in the implementation of the Catholicos' initiatives and undertakings. Historian Pavstos Buzand identifies Bishop Khad as the coadjutor of the Armenian Pontiff, St. Nersess the Great.

Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց



Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է: Այս դեպքում բարեկենդանը նվիրված է Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները գտնելու գյուտին: Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները համարվում են բոլոր քրիստոնեական եկեղեցիների ամենամեծ սրբություններից մեկը: Տոնի առթիվ եկեղեցին հաստատել է շաբաթական պահք՝ երկուշաբթիից մինչև շաբաթ:

Eve of the Fast of St. Gregory the Illuminator

This is the Sunday preceding the week prior to the feast of Discovery of St. Gregory the Illuminator's relic, in the 5th century, lasting from Monday to Friday.

Քրիստոսի անվան համար հալածվելը, չարչարվելը, բանտ ընկնելն ու նահատակվելը ոչ միայն ամոթալի չէր եւ չէ, այլեւ գովերգման, օրհնաբանության եւ օրինակ բերելու արժանի:

Քրիստոնյաներս միշտ պիտի հիշենք, որ Աստծուն սիրելու ու ծառայելու կերպը մերձավորին սիրելու եւ ծառայելու միջոցով է արտահայտվում: Ժամանակների ընթացքում շատ կառավարողներ ուղղակի չէին ասում, որ չարչարելու իրենց պատճառը չարչարվողի քրիստոնյա լինելն է, եւ այլ առիթներ էին հնարում եւ բերում՝ իբրեւ հալածանքի կամ չարչարանքի հիմք:

Այդ պատճառով քրիստոնյան միայն Քրիստոս անունը լսելիս չէ, որ պատրաստ է անցնելու դժվարության, տառապանքի ու նույնիսկ բանտի ու մահվան միջոցով, այլ Քրիստոսի անունով հանուն ճշմարտության, արդարության իր զրկված մերձավորի, հիվանդի, գերու, քաղցածի ու ծարավածի պատճառով, քանի որ կյանքի այդ ամեն կարիքի կամ անարդարության զոհի մեջ Քրիստոսին է տեսնում:

**«Բայց այս բոլորից առաջ ձեզ վրա ձեռք պիտի դնեն եւ պիտի հալածեն, ժողովարանների ու բանտերի պիտի մատնեն ձեզ եւ կուսակալների ու թագավորների առաջ պիտի տանեն ձեզ իմ անվան համար: Եւ ձեզ համար այդ պիտի լինի առիթ վկայության»* (Ղուկ. 21:12):

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

KAREKIN I EDUCATIONAL CENTER

BY THE BLESSINGS OF HIS HOLINESS KAREKIN II SUPREME PATRIARCH AND CATHOLICOS OF ALL ARMENIANS

ArmEssence



Educational Summer Courses for the Youth

Dates

for two programs

July 6–24 and

August 3–21, 2026



IMMERSION IN:

- Armenian Language
- History of Armenia
- Armenian Christian Faith

HIGHLIGHTS

- Meeting with His Holiness
- Visit to holy shrines
- Visits to cultural centers
- Youth Activities and free time in Yerevan

To sign up for further information write to:

k1center23@gmail.com

or contact your parish or diocesan office

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Քանի որ մեղքի վարձը մահն է, իսկ Աստծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք մեր Տէր Քրիստոս Յիսուսի միջոցով» *(Հռոմ. 6.23)*

Քրիստոսասէ՛ր եղբայրներ եւ քոյրեր,

Երբ Պողոս առաքեալը հռոմէացիներին ուղղուած այս տողերն էր գրում, Հռոմը կայսրութեան մայրաքաղաք էր, ինչպէս ասում էին՝ մայրաքաղաք աշխարհի: Այնտեղ էին խաչւում շատ ազգերի բարքեր, լեզուներ, մշակոյթներ, կրոններ: Այժմ էլ շատերի համար աշխարհի մայրաքաղաք է այս քաղաքը, իսկ Պողոս առաքեալի հատկապէս այս նամակը նման մեծ խաչմերուկ-քաղաքում ապրողների համար նորովի է հնչում:

Յաճախ կը լսենք այս արտայայտութիւնը հոգեւոր զրոյցների մէջ՝ «մեղքի վարձը մահն է», որ նշանակում է արդիւնքը, հետեւանքը, վաստակը մահն է: Որպէս կանոն՝ վարձը, արդիւնքը, վաստակը բաներ են, որ աշխատանքի, ջանքի, ճգնութեան դիմաց է: Բայց այս դէպքում բարի լինելու փոխարէն այդ վարձը, արդիւնքը վատ է, փչացնող ու կործանող. մահն է վարձը: Այսինքն՝ աշխատանք կա, բայց ուղղուած է ոչ բարի բանի՝ փչացումին, եղծումին, արարչութեանը վնասելուն: Կարեւոր է՝ ում համար ես աշխատում ու ջանք թափում, ո՞վ է քեզ այդ գործը յանձնարարել, որ վերջում նաեւ իր հատուցումը, վճարն է տալիս: Եթէ մեղք գործելուն ենք ծառայել մենք, կամայ թէ ակամայ ծառայութեան ենք մտել ուրիշ տիրոջ մօտ: ***«Չգիտէ՞ք, թէ ում համար, որ դուք ձեզ ծառայութեան մէջ էք դնում հնազանդութեան համար, ծառայ էք, ում որ հնազանդւում էք. եթէ՝ մեղքին՝ մահուան է տանում, իսկ եթէ՝ Աստծու հնազանդութեանը՝ արդարութեան»*** *(Հռոմ. 6.16):* Այս մասին է խօսում առաքեալը հռոմէացիներին եւ մեզ, որ մեր մարմնի անդամները պէտք է ոչ թէ պղծութեան, այլ մաքրութեան եւ սրբութեան ծառայեն:

Յետեւաբար տրամաբանութիւն կայ՝ բարի ջանք, բարի գործ, բարի աշխատանք, որի դիմաց կեանք եւ օրհնութիւն, եւ հակառակը: Բոլոր ժամանակների բոլոր մարդկանց յուզող խնդրի մասին է խօսում Պողոս առաքեալը եւ մեզ առաջնորդում ընտրելու շնորհն ու կեանքը

Ի վերջոյ, Սուրբ Գիրքը մեզ մատուցում է երկու հակադիր բեւեռներ՝ կեանքի եւ մահուան, օրհնութեան եւ անէծքի, արարչութեան եւ փչացումի: Երբ իսրայէլացիներն անապատի քառասուն տարիներով ծանր ու փորձութիւններով լի ճանապարհն անցել էին եւ արդեն պէտք է Աւետեաց երկիր մտնէին, մինչ Աստծոյ տալիք ժառանգութեան տիրանալը ունեցան այս պայմանը Աստծուց: Ղեւտացւոց եւ Երկրորդումն Օրինաց գրքերը ամբողջովին ներկայացնում են այն սրբութեան եւ մաքրութեան նորմերը, որոնցով պէտք է ապրէր Աստծոյ ժողովուրդը:

Անգամ յստակ երկու ճանապարհների օրինակն է բերում Տէրը, երբ ասում է, որ նրանց առաջ դնում է ընտրութիւն՝ օրհնութիւն կամ անէծք: Իրենք պետք է ընտրեն. եթէ կապրեն այդ երկիրն իրենց պարգեւող Աստծոյ պատուիրաններով, կունենան օրհնութիւն իրենց ու իրենց զաւակների համար, այլապէս իրենց արարքի վարձը անէծքն ու մահն է:

Քրիստոս հոգեւոր ժառանգութեան դաշտ է սա բերում՝ երկքնի արքայութիւն ստանալ եւ հաւիտենական կեանք ժառանգել, թէ մեղքի նկատմամբ սիրով արհամարհել Քրիստոսի խաչելութիւնը, իբրեւ վարձ ունենալ անէծքն ու մահը:

Աւետարաններից մահուան երկու տեսակ ենք ճանաչում՝ մարմնաւոր եւ հոգեւոր, ժամանակաւոր եւ յաւիտենական: Երբ Քրիստոս քաջալերում է Իր եւ Աւետարանի վկայութեան համար չը վախենալ, բերում է նաեւ այդ օրինակը, որ մարմինը սպանողից վախենալ պէտք չէ, քանզի հոգին անմատչելի է նիւթը սպանողին: Սրա համար առաջին իսկ դարից քրիստոնեաները չէին վախենում մահից, քանզի գիտէին, որ «մահից կեանք անցան»՝ ըստ ննջեցեալների յարութեան մասին Քրիստոսի խօսքի:

Քրիստոնէական եկեղեցին պատւում է այն մարդկանց, ովքեր ամէն գնով հաւատարիմ են մնում կեանք տուող Աստծո պատուիրանին: Ու եթէ այդ ճանապարհին պէտք է լինում վկայել արեամբ, նահատակութեան պսակ են ընդունում: Շատերի ջանքը, ճգնութիւնն անգամ Աւետարանը որակում է իբրեւ «կամաւոր մեռածներ այս աշխարհի համար», որոնք, այստեղ անտեսելով իրենց ժամանակաւոր շահը, վաստակում են հաւիտենականը:

Այժմ բազմաթիւ են մարդիկ, որոնք ասում են, որ չեն կարող ապրել ըստ պատուիրանների, քանի որ դա միայն Քրիստոսի համար էր հնարաւոր, Նա Աստուած էր, իրենք մարդ են:

Բայց հենց առաքեալների, նրանց յաջորդների, հոգեւոր սուրբ հայրերի ու առաջնորդիների օրինակով տեսնում ենք, որ դա հնարաւոր է դառնում, երբ քրիստոնեան իր մէջ զգում է մկրտութեամբ բնակուած Քրիստոսին եւ Աստծոյ Հոգուն: Սուրբերի օրինակը մնում է միշտ քաջալերող եւ ոգեւորող՝ նմանուելու Քրիստոսին եւ քրիստոսանման այս լուսաւոր մարդկանց:

«Յիշեցէ՛ք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստծոյ խօսքն ասացին: Նայելով նրանց կեանքի ընթացքի վախճանին՝ հետեւո՛ղ եղէք նրանց հաւատին: Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան» *(Եբր. 13.7-8)*

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2026 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

15 June	St. Epiphanius of Cyprus and St. Babylas the Patriarch, and his three disciples Wisdom 8:7-10; Nahum 1:7-9; 1 Corinthians 12:4-11; Mark 6:45-52
16 June	Sts. Constantine the King and his mother Helen Proverbs 16:9-17; Baruch 3:31-4:4; 1 Timothy 2:1-7; Luke 7:1-10
17 June	Romans 7:1-11; Matthew 12:9-15
18 June	Sts. Theodotus of Galatia, and Thalelaeus the Physician, and the Seven Virgins who were martyred at Ancyra Wisdom 6:11-21; 2 Corinthians 6:1-10; John 16:1-5
19 June	Romans 7:12-25; Matthew 12:15-21
20 June	Discovery of the Relics of St. Gregory the Illuminator Wisdom 4:7-15; Micah 7:7-10; Acts 20:22-32; John 10:11-16

Dear Armenian Community Members.

Our Lord has asked us all, to donate portion of our income to our church.

As Christians do you follow this commend?

Our clergy always stress to us that the church is not just the building, the clergy and the church services: it exists and thrives only through its congregations**. It is vital that the community does participates with their time and money to the church, without being complacently that a few wealthy donors can be called on.** The church needs all its adherents and should not be restricted to such a small set of active people.

So when you enter a church for a service expecting the doors to be open, the building to be lit up and heated, a priest at the altar, candles in the vestry, a choir and organist performing - think of what it takes to make all this happen. We must not take all this for granted.

Therefore, do not just dip in and out of the church when you come expecting others to provide – you are an important member of the church too. **Do your part and be generous when the collection plate is passing around.** Thank You

St Yeghiche Armenian Church Parish Council

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is no Memorial Service Request for this Sunday

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk